


Ձեռագիրք Ձեն Վերադարձուիր
—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ



HAIK
ARMENIAN POLITICAL, AND
HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A.
To whom all communications must be
addressed.
Terms for all Countries.
One Year - - - - \$ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ՄԹՈՂԶԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D.

ՏԵՌ-ԽԱՐԱԳ ԻՐ—Մ . Ս . ԳԱՐՐԻԵԼԵԱՆ

202 W. 23rd St., New York City, U. S. America.

U. SUPT

ኒኮኮ ቴዐሶፑ

ՅՈՒՆԻՍ 1 1891

Þ.Í.Í. 11

Entered as second-class mail matter. at P. O. New York.

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

ረዳዊቱን S. S. ሆሰሳዊ ሳጠብጥኩት — ርዳዊ
 ቱባብ—ቤትን ከ— ርዳዊነት ከገደባት — ሆሰሰሳ ሆሰሰሳ
 ቢባባት—ረዳዊቱን ከገደባት ርዳዊነት ሆሰሰሳ
 «ኢሳይያስ ከ— ሆሰሰሳ» — ከገደባት ርዳዊነት ሆሰሰሳ
 ሆሰሰሳ ሆሰሰሳ — ርዳዊ ከገደባት — ሆሰሰሳ ሆሰሰሳ — ርዳዊ
 ከገደባት ሆሰሰሳ ሆሰሰሳ — ርዳዊ ከገደባት — ሆሰሰሳ ሆሰሰሳ
 ሆሰሰሳ ሆሰሰሳ — ርዳዊ ከገደባት — ሆሰሰሳ ሆሰሰሳ



— ୧୯୫୫ —

Տ.Տ.ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՎԵՂ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 16 ԱՊՐԻԼԻ 1891

Ազգային Լրագիրք գոտեցին ՎԵՀ. ՄԱԿԱՐ ԿԱ-
ԹՈՂԻԿՈՍԻՆ մահն, որ ճշմարիտ սգով կը համակէ բ-
Վանդակ Հայու թիւնն:

Նորին Հայրապետութեան վախճանմամբ ազգն կը
գտնուի տագնապալից խնդրոյ մի առջեւ, որոյ լուծման
յամբ ապէս աշխատած և եղբակայութեան մի յանգած
չէր գեռ:

Մաղթենք որ ազգին թէ եկեղեցական թէ աշխարհական պաշտօնէութիւնք խնդրոյն փափկութեանն հաւասարող իմաստութեամբ մի յաջողին կաթողիկոսական ընտրութեան ճշմարտապէս ազգային եղող եղանակ մի հաստատել ընդ փոյթ ի մխիթարութիւն բազմալէտ ազգին և ի փառս Էջմիածնի Հայրապետական Գերագոյն Աթոռոյն

ԱԶԳԱՍՏԻՈՒԹԻՒՆ

6/10

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Մեր պատերն մինչև հայրերն ազգասիրութիւն ըսեկով եկեղեցասիրութիւն կամ առ առաւելն աղքատասիրութիւն կը հասկնային։ Ազգասիրութիւն՝ բառին բուն նշանակութեամբն՝ և մանաւանդ հայրենասիրութիւն, նոր երեւոյթներ են Հայ կենաց մէջ։ Եկեղեցիէ և կրօնական համոզումներէ անկախ՝ ազգութեան և ազգասիրութեան գաղափարներն նոր սերնդեան մանաւանդ յատուկ են։ Ըսել չեմք ուզեր թէ ազգասիրութիւնն անկըօն՝ և հայրենասիրութիւնն անեկեղեցի պարտին լինիլ. ամենեւի՛ն։ Յորչափ կրօնն և եկեղեցին զբարոյական զարգացունելու ծառայող գործիչներ են, կարեւոր նեցուկ են նաեւ ազգասիրութեան, վասն զի անբարոյական մարդու մի ազգասիրութիւնն, չարասիրտ անհատին հայրենասիրութիւնն իմաստասիրօրէն անհնարին է։ Ազգմի կազմելու համար ազգային եկեղեցի թէ՛ և հարկաւոր չէ, մեր ազգին ներկայ պայմանաց մէջ կարեւոր ազգային դեր մ'ունի Հայ եկեղեցին՝ իբրեւ Հայկական գոյն և հանգամանք կրող բազմադարեան հաստատութիւն։ Թէ ազգային միութեան շօշափելի կեդրոն մ'է Հայ եկեղեցին, զայն աշխարհ կը տեսնէ և մեք Հայքս ալ կ'ըզգամք մանաւանդ այն առթիւ երբ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ, այն է Էջմիածնի Կաթողիկոսի նոր ընտրութիւն մ'ընելու կը կոչուի Ազգն։

Հայ ցեղն իւր հին երկրի սահմանաց մէջ կը կրէ զլուծ երկից պետութեանց, Ռուսին, Թուրքին կամ Պարսկին, իսկ այն սահմաններէն դուրս՝ զլուծ ուրիշ տէրութեանց, ինչպէս՝ զԱնգղիականին ի Հնդկիս, ևն ևն։ Մեր համատարած ցեղն իւր միութիւն ի հանդէս բերելու և իրեն պաշտօնական և ճանաչելի մէկ գլուխ անուանելու միակ իրաւունք մ'ունի, այն ալ եկեղեցական իրաւունք մ'է։ Այսինքն էջմիածնի կաթողիկոս ընտրելու իրաւունքն։ Ու իցէ տէրութիւն, որքան ալ բռնապետ, չկըրնար բացարձակ արգիլել զՀայս իրենց եկեղեցւոյ օրէնքն և աւանդութիւններն յարգելէ։ Ուստի և բովանդակ Հայ ազգին եկեղեցական վեհագոյն Պետին ընտրութեան հաս-

մար ստիպուած են Տէրութիւնք թոյլ տալ իրենց հաւատակ Հայոց մասնակցիլ քուէարկութեան: Կ. Պօլսոյ Պատրիարքին քաղաքային պաշտօնն Տաճկաստանի Հայոց միայն վերաբերութեամբ է, իսկ էջմիածնի կաթողիկոսն թէ և եկեղեցական՝ այլ ամենայն Հայոց իսթիւռու աշխարհի գլուխն է, և կրնայ իրրեւ այն՝ պաշտօնապէս պաշտպան կանգնիլ Հայ եկեղեցական իրաւանց աշխարհի ու և իցէ մասին մէջ:

Բառին բուն նշանակութեամբն կաթողիկոս՝ միայն էջմիածնայ Հայրապետն է, իսկ Սոսյ և Աղթամարայ կաթողիկոսներն յանձնուկ միտս հայրապետ են, և խոհեմութեամբ կը պահուին դառն հարկաւորութեանց պահուն անոնցմէ միւսմ կամ միւսում զգեցունելու նշանակաւ տիեզերական հանգամանք: Երկրորդ կարգի այս երկոքին կաթողիկոսութիւնք այժմէն ալ կրնան տիեզերական հայրապետին շուքն և գորութիւնն բարձրացնելու ծառայել, ինչպէս որ ընդհակառակն կրնան եւս պառակտման և տկարութեան պատճառ հանդիսանալ:

Մակար Հայրապետին մահն մեծ և կնճուռա խորն դիր մի կը բանայ: Ամէն եկեղեցականի և ամէն Հայու պարտքն է այնպէս շարժիլ որ էջմիածնի կաթողիկոսութիւնն իւր ազատ և տիեզերական հանգամանայ մէջ հաստատուի և գորանայ բոլոր Հայոց քուէի մասնակցութեամբ: Ըստ մեզ ոչ միայն Տաճկաստանի և Ռուսիոյ, այլ և բոլոր ստուար գաղթականութեանց Հայերն, ինչպէս Պարսկաստանի, Հնդկաստանի և Եգիպտոսի, պարտին ձայն ունենալ այս ընտրութեան մէջ, զի նոքա եւս Հայ են և Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակ ճիշդ Թրքական և Ռուսական Հայոց պէս:

ՆԱԽԵԿ ՄԱՆԶԻՍԹՐՈՒՆ

«Հայք»ի յատուկ թղթակցէն

8 Մայիս 1891

Ձատկի առթիւ Տիար Չերազ այցելեց Մանչէսթըր և անցեալ չորեքշաբթի «Մէմօրիլ Հօլ»ի մէջ բանախօսեց Հայաստանի վերայ, մասնաւոր հրաւիրմամբ Մանչէսթըրի Աշխարհագրական Ընկերութեան: Պատ. ընթացիւ Նախագահեց և ներկայացուց զՏիար Չերազ, որ, ըսաւ, Հայերէն լեզուի առաջին ուսուցչական էր յԱնգլիոյ, և Հայոց համար ևս ըսաւ թէ իրենց բազմադարեայ կրօնական մարտիրոսութեամբն և շահեկան յատկանքօք յիրաւի արժանի են Անգլիոյ համակրութեան և մասնաւորապէս Աշխարհագրական Ընկերութեան անդամոց (լսեցէ՛ք, լսեցէ՛ք): Փոք. Մինաս Չերազ յայնժամ բանախօսեց, որ իբր 90 վայրէն տեւեց: Ի միջի բազում այլոց, ըսաւ թէ հայերէնն յոյժ անկատար կերպիւ ուսումնասիրուած էր Անգլիոյ մէջ, թէեւ այս լեզուն լաւագոյն ուղղորդութեան արժանի էր: Գրեթէ ամէն սիրական Անգլիացի բանաստեղծ թարգմանուած էր հայերէնի, և անոնցմէ որոնք որ Հայերէնն ուսած էին մեծ գովաստով խօսած էին անոր վերայ: Փոքր Ասիոյ հայկական գաւառներն, ուր ոչ մի գործարան և ոչ ծխնելոյզ է տեսնել այժմ, էր մին այն երկրացի ուր երբ որ անգլիական դրամագլուխ գործածուէր, աներկբայ պիտի տայր լիովի արդիւնք: Փոքիտարն ի մէջ բերաւ նաեւ հայկական առասպելներ բնիկ լեզուով՝ անոնց անգլիերէն թարգմանութեամբն հանդերձ, որք լաւ ընդունուեցան ունկնդրաց կողմանէ: Յաւարտ բանախօսութեան

նրն նախագահն և այլք ոմանք շնորհաւորեցին զՏիար Չերազ իւր ընտիր ճառի համար, և ժողովականք շնորհակալութիւն մատուցին նմա քուէիւք և ծախահարութեամբ:

Տր. Մ. Ս. Գաբրիէլեանի մէկ նոր երկասիրութիւնն «ԱՐՈՒՆՍ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ» այժմ ընդ մամլով՝ իւր տեսակին մէջ առաջին գործն է հայերէն: Որպէս զի այժմէն ճաշակ մի տուած լինիմք մեր ընթերցողաց, այս գրքի «մուտք»ն եղող ներածական մասն «Հայք»ի մէջ կը հրատարակեմք:

ՀԱՅԵՐԵՆ

ԻՐԵՆԻ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒ

Մ

Մինչ չեւ էր լեզու աբանու թիւնն, ի գովաստմեր ազգային լեզուին կը անդէին ոմանք թէ Հայերէնն Աղամայ լեզուն է, և բոլոր լեզուաց նախամայրն: Այժմ աւելի դրական ապացոյցներով կարելի է նշանակել աւելի գործնական գերազանցութիւններ Հայ լեզուին: Արդարեւ հայերէնն, ըստ ձեռնհաս վկայութեան Փրոֆ. Գառնիէի նման լեզուագիտի, է մին յերից ճոխագոյն լեզուաց աշխարհի, և իւր արմատական առատութեամբ՝ թերեւս գերի վերոյ քան զյունարէնն անգամ:

Հայերէնն գերազանց է նաեւ իւր մեծ յարմարութեամբ ատենախօսութեան: Ի դէպ կը թուի մեզ բաւական երկարօրէն բացատրել զայն ի մուտս մեր գործոյ վասն զի մեր ազգային լեզուն դեռ քննուած և դատուած չէ այս տեսակէտէն, և անհմուտք ոմանք զայն անընդունակ կը կարծեն ատենախօսութեան:

Ե

Պերճաբան և հզօր ատենախօս լինելու համար մարդ մտքի, սրտի և բնաւորութեան ինչ ինչ յատկութիւններ պարտի ունենալ: Արդարութեան և ճշմարտութեան սէրն, բարւոյն և գեղեցկին աւելնն, խորին համոզումներն և բարձր տեսութիւններն եթէ կը պակսին մէկուն, անկարելի է նմա պերճախօսել. անկարելի է նմա ձայնի և եղանակի այն թափանցող և շարժող ոյժն ունենալ որ երբեմն ցած և տկար ձայնի մէջ անգամ կը յայանուի: Բայց պարտ է ընդունիլ նաեւ թէ ընթեռնու և խօսելու կրթութիւնն հզօրագոյն կը գործէ հզօր ատենախօսն, և ուղղորդութեան արժանի կ'ընէ նոյն ինքն հասարակ կամ ստորին հրապարակախօսն:

Թէ Հայ ցեղին մէջ կա՞ն շատեր օժտեալ այն ներքին պայմանօք որ հարկաւոր է պերճախօսին, զայն չունիմք ասել: Ընկերական պայմանք և կրթական վիճակ թոյլ տուած չեն դեռ որ Հայ ցեղն իւր խօսելու կարողութիւններն լիովին ի հանդէս բերէ: Մեր տպաւորութիւնն այն է թէ Հայն նշանաւոր կերպիւ ընդունակ է պերճախօսելու:

Փալով քաջ ատենախօսութեան արտաքին հանգամանաց, որ մեր գործոյ մասնաւոր նիւթն է, համարձակ կ'ըսեմք թէ հայերէնն, ձայնի և արտասանութեան տեսակէտով, նախանձելի յարմարութիւններ կը կրէ:

Գ

Ատենախօսին պարտ է ոչ միայն յատկօրէն արտասանել բառերն և զայնո լսելի ընել ունկնդրաց հնաւորս-

գունին անգամ, այլ և իւր ձայնի և եղանակի մէջ դնել այն զօրութիւն կամ տկարութիւն, այն երկարութիւն կամ կարճութիւն, այն մեծութիւն կամ փոքրութիւն զոր իւրաքանչիւր բառի մշտափոփոխ նշանակութիւնն կը պահանջէ: Բառարանն երբէք չէ կրցած և չպիտի կրնայ նըշանակել այս ինչ տուեալ բառի բոլոր նշանակութիւնները կամ նշանակութեանց անհուն եղանակաւորութիւններն: աստեանախօսին ձայնն, առողջանելու եղանակն է որ պիտի տայ զայնս: Օրինակի համար մ ե ծ բառն մեծութեան որոշ չափեր չցուցներ, քսյց աստեանախօսն ամէն անգամ որ այդ բառ կ'արտասանէ, իւր առողջանութեան շնորհիւ կրնայ ցուցնել՝ մերձաւորապէս բայց ըստ բաւականին՝ անոր չափերն որք ըստ տեղւոյն կը տարբերին:

Ճարտար առողջանողն կարող է բառին հաղորդել այն Կրանդ և աստիճան զոր իմաստն և տեղն կը պահանջեն, և սակայն զայս աւելի լաւ և աւելի ազդեցիկ կերպիւ կրնայ ընել եթէ բառին ձայնական հանգամանքն եւս յարմար լինին: Օրինակի համար առնունք խ ի ս տ բառըն: Կարելի է հնչել զայն այնքան տարբեր հզտնակօք որ նշանակէ «փոքր մի խիստ» — «բաւական խիստ» — «կարի խիստ» — «յանչափա խիստ» և այս չորս գլխաւոր աստիճաններուն մէկէն ի միւսն փոխանցական եղող անհուն աստիճաններ: Զայս ընելու մէջ, եթէ փորձեմք, պիտի գտնեմք թէ մեր գլխաւոր օգնականն է ի տառն, որում կրնամք տալ խոստութեան անհուն զանազանութիւն: Բայց եթէ հայերէնի մէջ խ ի ս տ բառին նշանակութիւնն տուող բառն դժբաղդաբար չի ստեղծուի ինչի կամ, աւելի դժբաղդաբար չի մն, յայնժամ պիտի տեսնէինք թէ բառն որքան կորուսած պիտի լինէր իւր աստեանախօսական յարմարութենէ: Ընդհակառակն առնունք մ ե զ մ բառն. հնչենք զայն, և պիտի զգանք թէ հնչմանն մէջ կայ իմաստին պատասխանող բան մի. կըրնամք այդ մ ե զ մ բառին տալ մ ե զ մ ու թ ե ա ն անհուն աստիճաններ առողջանութեան շնորհիւ:

Արդ կը մնայ քննել թէ հայերէնի մէջ այսպիսի բառեր բացառութիւն են թէ, ընդհակառակն, ձայնական հանգամանք բառից բաւական յաճախ կը պատասխանեն բառից նշանակութեան:



Հայերէն լեզուն իրեն յատուկ ծննդարանութիւն մի չունի անշուշտ, այլ կը հպատակի այն օրինաց որոց համաձայն բառը և լեզուը ի գոյ եկած են: «Ի գոյ եկած են» կ'ըսեմք, որովհետեւ լեզուը գործարանաւորութիւնը են աճող, ծերացող ու մեռնող՝ ոչ թէ արուեստական յօրինուածներ:

Ոչ միայն լեզուն այլ և բացատրութեան ուրիշ ամենայն միջոց օրէնք ունին: Օրինաց ինչ զօրութեամբ է որ ծիծաղն այս ինչ ողբական մասնաւոր վիճակի բացատրութիւնն կը լինի ամէն ազգի և ամէն դարու մէջ: Հընար չէ որ լացն զուարթութիւն, և հառաչանքն ինքզինից զգացում բացատրէ:

Արդ ճիշտ այն օրէնք որ դէմքի մկանսնց կուտայ այս ինչ կամ այն ինչ կծկումներն ընել որովք արտայայտուն են երկիւղ կամ սէր, բարկութիւն կամ զուարթութիւն, դարչանք կամ ախորժանք, և այլն, կուտայ նաև լեզուի, շրթանց, հագագի, քմաց, ռնգաց և խռչակի, այսինքն յօշաւոր բարբառի գործարանաց, այս ինչ կամ այն նիշ կծկումներն ընել ճիշդ այն պահուն տիրող զգացմանց հաւատարիմ թարգմանութիւնն բարբառել աւարտ

համար: Ըստ այդմ՝ բառը — արմատականք և նախնականք — հեռի են պարզապէս կամայական նշաններ կամ ձայներ լինելէ: Երբ մարդկային էակք սկսան բառեր արտասանել՝ առարկաներ կամ վիճակներ նշանակելու համար, օրինաց ինչ համաձայն բարբառեցան: Բառն իւր ձայնական հանգամանք եղաւ իրր ցոլացումն այն սպաւորութեան զոր դիտեալ կամ ունինդրեալ առարկայն գործեց բարբառողին հոգւոյն վերայ:

Մարդկային լեզուաց նախնական բառերն անշուշտ մաշած և աղաւաղած են յընթացս դարուց, ուստի և դիւրին չէ ի նոսա նշմարել սկզբնական տիպն, բնական դիմագծութիւնն, և ցուցնել այն ներքին համաձայնութիւն որ կայր բառերուն ձայնական հանգամանաց և նօքօք նշանակեալ վիճակաց մէջ: Նախնական և այս մօք բնական բառերու ոչ սակաւուց տեղ յետոյ դրուած են առաւել կամ նուազ զարգացեալ և արուեստական կազմութիւն ունեցող բառեր: Նաեւ, նախնական բառից ոմանց սկզբնական նշանակութիւն փոխուելով ուրիշ առմամբ գործածուած են: Ի վերայ այսր ամենայնի ամէն լեզուի մէջ ալ կան բազում բառեր որք տակաւին կը պահեն սկզբնական վիճակն, և գոգցեն ձայնական պատկերներ են գաղափարաց:

Այս տեսակէտէն հայերէն լեզուն մասնաւոր ուսման առարկայ ըրած եմք ի բազում ամաց հետէ և կը համարձակեմք յուսալ թէ բաղդատական քննութիւնք պիտի ցուցնեն թէ հայերէնն, բնական կազմութեան և հետեւապէս աստեանախօսական տեսակէտով առաջին լեզուն է կամ մին յառաջնոց:

Հայերէն լեզուն կարի հին և մաշած լեզու է, սակայն և այնպէս նախնական բառերու մեծ զանձ մ'ունի առաւել կամ նուազ անվթար մնացած: Հարկւրներով կրնամք համարել հայերէն բառեր որոց ձայնական կազմութենէն գուշակելի է թէ որպիսի նշանակութիւն պարտին ունենալ այդ բառեր. կ'ըսեմք «որպիսի» վասն զի բառն, որքան և բնական լինի, չեմք կրնար ըսել թէ ճիշտ պատկեր է իրին և թէ չէր կրնար ուրիշ ձայն մի նոյնքան յարմարութեամբ արտայայտել նոյն նշանակութիւնս: Միայն սա կ'ուզեմք հաստատել թէ խիստ և զօրաւոր տառերն մտած են մեծ, խոշոր, զօրաւոր տառեր կաներու նշանակիչ բառերու մէջ, իսկ ձայնի փափուկ և մեղմ տարրերն՝ փոքրիկ, փափուկ, տկար առարկաներու բացատրիչ անուանց մէջ:

Յայտ է թէ ժ, ռ, խ, չ, հ, շ, ջ, փ, տառերն աւելի զօրաւոր են քան լ, մ, բ, ծ, ն, վ: Արդ առնումք արմատական և նախնական բառեր և քննեմք այս տեսակէտով: Արդէն դիտեցինք խ ի ս տ և մ ե զ մ բառերուն բնական կազմութիւնն: Առնունք խ ո շ ո Ր և մ ա ն Ր բառերն. խ և շ տառերն որքան որ բնական կը գործեն առաջինն, մ, ն և ք ալ՝ երկրորդն: Նոյն բանն կը տեսնուի թ ա ն ձ Ր և ն ու Ր բառերուն մէջ. թ ա Ր ձ Ր ին հնչումն ալ թանձրութիւն մ'ունի, ինչպէս ն ու Ր թ ին նուրբ բան մի: Այսպէս են նաեւ խ ո Ր և ծ ա ն ծ ա Ղ, դ ժ ա Ր և դ իւ Ր, ժ ի Ր և ծ ո յ լ. հնչմունք այնքան բնական հոկադրութիւններ կը ներկայացունեն որքան իմաստք այս բառից: Հնչենք հետեւեալ բառերն — ո չ, չ ա Ր, ժ ա ն տ, ք ա Ր, ք ա ջ, կ ու ու, կ ու իւ, խ ո ժ ու, դ ա ժ ա ն, ժ ա յ ու, լ ե ա ու, ժ խ ո Ր, խ ո ո վ, հ ե ո ի, խ ո ո ու, բ ո ո ու, հ Ր ե լ, խ զ ե լ, խ Ր ե լ, ձ դ ն ե լ, խ ո ո ժ ե լ, պ ն դ ե լ, ս ա ո տ ե լ, հ ա ո տ ե լ, մ ի ս ե լ:

Յայտնի է թէ՛ ձայներն կը ներդաշնակին իմաստից հետ: Այժմ արտասանենք ուրիշ ձայնական հանգամանք ունեցող բառեր — մ ե ղ կ, մ ե ղ ր, ա ն ո յ չ, ծ ի լ, ծ ա ղ ի կ, կ տ ի կ, վ տ ի տ, կ ծ ծ ի, յ ու չ ի կ, վ ճ ի ա, բ ի ծ, ս ի ն, ծ ո յ լ:

Նոյնպէս ինքնայայտ ներդաշնակութիւն մի չե՞նք ըզ-գար այս ձայնից և նշանակութեանց միջեւ:

Բառերու բնականութիւնն դատելու համար բաւա-կան չէ փնտռել միայն խիստ և մեղմ, զօրաւոր կամ տը-կար տառերու ներկայութիւնն, այլ դիտել բառին ամ-բողջ կազմն ձայնաւորօք հանդերձ, բաղաձայնից յաջոր-դելու եղանակին մէջ, տառերուն և վանկից իրարու ե-տեւէ գլորելու կամ ընդ քարշ երթալու, և այլ անբա-ցատրելի բայց զգալի եղանակաց մէջ: Օրինակի համար գ լ ո Ր ի լ, ս ր ա ն ա լ, ս լ ա ն ա լ, լ ա Ր ծ ու ն, բա-ռերն զօրութեան հետ արագութեան եւս գաղափարն կը պատկերացունեն գ լ ո, ս ր ա, ս լ ա Վ ա Ր, մէկ վանկ լի-նելով և արագապէս տառ ուռնի յաջորդելով. և եթէ ոք անգիտութեամբ հնչէ գ լ ո Ր ի լ, ս լ ա ն ա լ, ս լ ա ն ա լ, լ ա Վ ա Ր ծ ու ն, կը ջլատէ և խեղ կը գործէ այդ սքանչելի բառերն:

Անտարակոյս կարելի է բազում բառեր ցուցնել որք լաւ չեն համաձայնի վերի օրինաց: Սակայն մեք բացա-ռութիւններն, ոչ սակաւաթիւ, չենք ժխտեր: Մեծ զար-մանք պիտի լինէր եթէ յընթացս այնքան հազարաւոր տարիներու, բառերու ամէնն պահած լինէին իրենց ըսկզ բնական դիմադժութիւն: Տակաւին զարմանալի է որ այնքան բազմաթիւ են բնակազմ բառեր մեր լեզուի մէջ, ինչպէս պիտի տեսնեմք:

Հայերէնի մէջ մասնիկը եւս վերոյիշեալ օրինաց առ հասարակ համաձայն կերպիւ բացատրիչ են: Մն ձայ-նըն մեր լեզուի մէկ սքանչելիքն է: Մն հնչումն յոյժ բնական կերպիւ կը պատկերացունէ մանրութեան, փափ-կութեան, անորոշութեան գաղափարներն: Կը կցուի ո, ի, երբ արմատներուն և կը կերտէ ո մ ն, ի մ ն, երբ ե մ ն, բառերն որք մէկուն, բանի մի և ժամանակի մի անորոշ միտքերն կուտան: Նոյն մն հնչման շնորհիւ է որ ի մ ն կ'ընկերանայ այլ և այլ մասանց բանի և նոցա կընծայէ անորոշութեան, կիսկատարութեան փափուկ բայց զգալի եղանակաւորութիւն մի — օրինակի համար կ'ըսուի «կա-մէր իմն», «Հաւանեցաւ իմն», «Այսպէս իմն երեւի» «Ա-ւելորդ իմն էր», բացատրութիւններ որք կատարեալ «կամք», «Հաւանութիւն», «այսպէս» կամ «աւելորդ» լի-նիլ չեն արտայայտեր: «Իմն» իմաստն այդ բառերուն կցելու համար երկար բառեր կամ խօսքեր պէտք կը լի նին: «կարծեմ թէ կը կամէր» «Գրեթէ Հաւանեցաւ» «կը նամ ըսել թէ աւելորդ էր» բացատրութիւններն ոչ նոյն ճշգրտութիւնն կամ երանգն ոչ նոյն շնորհն ունին:

Նոյն մն է որ սւ մ ն մասնական ձեւով դործած-ուած է երբ մն պարզապէս դրուելով բառն դժուար պիտի հնչուէր: Հ ն չ ու մ ն, փ ո փ ո խ ու մ ն, կ ո չ ու մ ն, ըսուած է վասն զի կ ո չ մ ն, հ ն չ մ ն, փ ո փ ո խ ու մ ն պիտի լինէին ոչ հեշտ ձայներ: Սակայն ըս-ուած է կ ո ղ մ ն, ս եր մ ն ևն, ըստ որում կ ո ղ և ս եր արմատներն մն յաւելուածն առնելով կայտառ և ոչ դժ-ուարին կերպիւ կրնան արտասանուիլ:

Դ ժ մասնիկն հայերէնի մէջ ունի իմաստին պատշաճ

ձայն. դ ժ կ ա մ ա կ, դ ժ բ ա ղ դ, դ ժ ը ն դ ա կ ևն: Բաղ-ձալի է որ դ ժ մասնիկն պարզապէս կցուի կարգ մի նոր բառերու, որոց «դժուար» բառն կցած են նոր բառ յօրինող ներն. օրինակի համար լաւագոյն է ըսել «դժմարսու-թիւն» (dyspepsie), «դժմիզութիւն» (dysurie), «դժկու-թիւն» (dysphagie) ևն:

Պատուական մասնիկ մ'ալ հ տառն է: Ահաւոր և վեհ առարկայից տպաւորութեան ներքեւ մարդ Հ ձայ-նըն կը հանէ շունչ տալով հազագէն, և այդ Հ է որ ի-մաստիցն յարմար հոգի և շունչ կուտայ հ ի ա ն ա լ և ահանալ բառերուն: Հ կցուելով երբեմն ի սկիզբն և եր-բեմն ի վերջ բառերու, կը շնորհէ անոնց մն մասնական հակառակ իմաստ, անոնց կ'ընծայէ մեծութեան, զօրու-թեան, սաստկութեան կամ չափազանցութեան գաղա-փարներն. ինչպէս վեհ որ վերհ է, այսինքն հիանալի կերպիւ վեր կամ բարձր. վիհ որ վիրհ է, այսինքն սոս-կալի աստիճան վար կամ խոր. խոհ որ խորհ է, այս-ինքն յոյժ խոր: Հ զ օ ր, որ շատ զօրաւոր է, հ լ ու, որ լաւ անսացող կամ խրատ լսող է, հ մ ու տ, որ խորն մը տած է, հ ի մ ն որ, մեծ իմն է, և հ պ ա Ր տ, որ չափա-զանց պարծ կամ բարձր է: Հ բայից ինչ եւս նոյն մաս-նաւոր եղանակաւորութիւն տուած է, ինչպէս հայել (ակն բառէն) և հարկանել:

Նուազ փայլուն կերպիւ և նուազ յաճախ կատարած են Հ ի դերն չչական տառեր եւս, ինչպէս չ և ս, ո-րոց յաւելմամբ շինուած են չ ա կ ա ն ջ ե լ, ս ք ո ղ ե լ և այլն:

Ձ մասնիկն հայերէն լեզուին մասնաւոր շնորհաց մին է: Որոշ հայցական շինելու համար բառին կցուելով, ի-բրըր նախդիր, որոշութեան միտք կուտայ, և ցաւտլի է որ նորոգ հայերէնի մէջ այդ նախդրի մեծ յարգն լիո-վին գնահատուած չէ գեռ: Նոյն Ձ ձայնն է որ իբր մաս-նիկ բայերու կը կցի և կ'աւելցունէ զօրութեան, սաստ-կութեան չափա անցութեան գաղափար. ինչպէս զեղ-ծանիլ, զեռալ, զըղջալ (ըստ մեզ միշտ այս բառին ը գիրն յայտնի գրել պարտ է), զեղուլ, զայրանալ, զար-հուրիլ, զանցանել, զգետնել, զետեղել:

Անհաւանական ենթադրութիւն մի չլինիր եթէ հա-մարիմք թէ սաստկացուցիչ և զօրացուցիչ Ձ ձայնն է որ զ օ դ, զ ա Ր դ, զ ա տ բառերն շինած է յօդ, յարդ, և յատ կամ հատ բառերէն, յ ի կորստեամբ. զեղլի բա-ռըն ալ կը թուի հ ե դ ու մ բառին սաստկացեալն հ ի կորստեամբ:

(Հարո՛ւնալիւ)

ԼՈՅՍ ԵՒ ԽԵՒԵՐ

Գրեց Զ. ԳԵՐՍԵՆՈՍ ԲԵՐՍԵՆՍԵՆ

Նիւ Եօքը, Տպագրութիւն Հ. Էկինեան, 1890

Ամերիկա եկող ամէն Հայ նորութեանց հոտանքի մի առջեւ կը գտնէ ինքզինք, և իրերն ու մարդիկ ըստ կա-րի կը դիտէ և կը դատէ: Եղած են ոմանք, որք գրիչ դործածելու փոքր ի շատէ վարժ լինելով գրած են Պօլ-սոյ լրագրաց համար յօդուածներ, այս երկրին խաւար երեսն նկարագրող սեւ յօդուածներ դժբաղդաբար: Որ-պէս թէ խաւարն արդէն բաւական թանձր չլինէր, յօդ ուածագիրն ջանացած է զայն աւելի խօլ և ահաւոր ը-նել՝ ամէն յոռի բան չափազանցելով և երբեմն ալ իր քովէն ստեղծելով: Սոսկմամբ և պժգալով դիտած եմք այսպիսի նամակներ «Արեւելք»-ի մէջ իսկ հրատարակեալ:

ԼՈՅՍ

Պատ. Բարակեան « Լոյս և Խաւար » ն տարբեր ոգևոլ գրած է : Ուզած է նա այս երկրին սեւ և ճերմակ երեսներն անաչառապէս նկարագրել : Իւր լեզուն պարզ և ախորժելի է, խորհուրդքն՝ հասուն և հայրական : Փոքր մատենին մէջ հազուադիւս չեն մասնաւոր ուշադրութեան արժանի էջեր : Այս երկրի մեծագոյն յատկանիշներէն մին եղող եռանդուն և լաւիչ գործունէութիւնն շատ լաւ նշանակուած է իրբեւ գաղտնիք յաջողութեան և հանրային ապահովութեան : « Էական և գլխաւոր ուրիշ երկու միջոցներ կան հոս » կ'ըսէ հեղինակն յերես 52, « որոց Ասիային ոչ խեղամուտ է և ոչ հետամուտ, ԳՈՐԾՈՒՆԷՆԻՍԻՍԻՆ և ՃՇՏՈՒԹԻՒՆ : Հոս ան որ հարուստ է առաւել գործունէայ և աշխատասէր է, կը գտնուի իր գործին գլուխը գործաւորին հետ ճիշդ ժամանակին : Կ'առնէ, կուտայ, կը կարգադրէ, կը խորհի ու կը գրէ ամէն օր : անոր ժամերը պատուական ու րոպէները սուղ են, ու հետեւապէս ունին տղարներու արժողութիւն : Նա տաճկաստանցուն մանաւանդ Տաճկաց հարուստին պէս չէ : Թէ որովհետեւ հարուստ է, պէտք է շատ ուտէ խմէ, շատ պառկի քնանայ : ձեռքը տաքի պաղի չը դպցնէ, և գլխաւոր զբաղումն ըլլայ երկայն « չըպըք ու նարկէլէ », , քթախտ, ծխախտ ու սիկարէ : Բողոքը ծանր քալէ : Նայի խոթող դէմքով : Խօսի իշխանաբար, ապրի անգործ և անօգուտ ու մեռնի յիմարաբար, անօգուտ անձին և անէծք աշխարհի :

Այսպէս չէ հոս հարուստը, այլ աշխատող և գործունէայ, և սա է անոր յաջողութիւնը—պահել ժամանակի ճշտութիւն և գործել ժրջանութեամբ : »

Եւ յերես 71 « Դեռ հոս չտեսայ, կարծեմ պիտի չ'տեսնեմ ալ որ կարգ մը անձինք բոլորակի նստած սիկարէթ կամ նարկիլէն բերանին, զանազան տեսակ շաղակրատութիւններ ընելով ժամանակ կորսնցունեն : ատ օրհնութիւնն թողուցած են տաճկաստանցուն : Եթէ կը կասկածի ընթերցողն թող հրամէ ամէն ատեն, մանաւանդ ձմրան դիշերներն ազարն կամ չորպաճիին « օտան » և կամ հողագործի ախոռի « սէքի » : Ան տեղեր ազգաց բաղդեր կ'որոշուին : Թագաւորաց թագեր կը փոխուին : պատերազմաց յատակազծեր կը նշանակուին : կարգ կանոն և օրէնք կը հաստատուին, մինչդեռ այդ բարձր ին դիրներով զբաղեալ անձանց շատերուն տունը ուտելու հաց չկայ, պառկելու մահճին շունը չը պառկիր, ու գլուխուն կամ հանդերձուն իւղերը գոմեջ մը կամ մեքենայ մը կը ձիթէ : չապիկին է միսրագոյն, մարմինն ալ ո՛ղոց բոյն : ո՛հ՝ ազիտութիւն և անգործութիւն հետեւաբար աղքատութիւն ու թշուառութիւն մեր երկրին :

Արդ գիտնալու է թէ ոչ միայն սովորութիւն այլ հիմունքն սկզբունք է այս երկրին պարապ ժամանակ չանցունել, զի ժամն է ակունք և բուսն ոսկւոյ մանրուք : »

Ուրիշ կարեւոր խնդրոյ մի վերայ եւս պատշաճապէս պնդած է հեղինակն, այն է Մ ա ճ ր ու թ իւ ն : « Կարծեմ չափազանցութիւն ըրած չեմ ըլլար » կ'ըսէ յերես 59, « Եթէ ըսեմ թէ տեղւոյս մասնաւոր վրայի ճերմակ վերարկուն և օձիքը առաւել մաքուր ու ճերմակ է, քան մեր երկրին վաճառականին էնթէրին և օձիքը : աս գովելի է ըստ ինքեան և չէ պօղալի ինչպէս են մեր երկրին մասնաւորներուն, սափրիչներուն, մըրգավաճառներուն և մինչ իսկ սեղանաւորներուն խանութները : Բաց կոյանոց (յերես 77) և հարուստ թաղերուն մէջ հոտած փողոց չես տեսներ : Տանց ամէն յարկերուն մէջ արտաքնոյններ կան և ամէնուն մէջ ջուր կը վազէ, ուստի եթէ մէկը ինք աղտոյաւէր ծոյլ և անպիտան չըլլայ, բոլոր անմաքրութենէ հեռու և աղատ կրնայ ապրիլ : Երեւելի տուններուն և խանութներուն ապակիներն գըրեթէ ամէն օր կը լուացուին, և ներսէն ու դրսէն ամէն

բան մաքուր կը պահուին : մաքուր են ծախուած և գործուած բաներն, մաքուր են ծախող և գործողները

Քանի սր նոր գիւտից և նոր մեքենայից աշխարհ է, ուստի ի հարկէ խիստ շատ աղտոյի գործեր կան և ընդհանրապէս աղտոյի, սակայն գործէ ու գործարանէ դուրս ամէն բան և մարդ մաքուր է, բացի անոնցմէ որք վատ թար և անպիտան անձինք և յիմար ու գինեմուլ իրանտացիներ ու իտալացիներ են : բայց գիտնալու է թէ անոնք ալ քիչ չեն : »

Ամերիկայի « Խաւար » ին լիւրի նկարագիրն ընելէ յետոյ հեղինակն կը հասնի խրատալի եղբայրացութեանց շարքի մի : « Մեր երկրացին իր քիչ ստակը օտարին փայլուն ու սուղ բանին թող չտայ, ոչ ալ իր կատրի ճնեւը ի մերի կայ գործարանաց մէջ փատեւութիւնը զրկէ : » կ'ըսէ : « Կը խրատեմ (երես 126) Հայ երիտասարդը որ Ամերիկայ գալէն զգուշանայ... Թող հոս գործածելիք ուժը հոն գործածէ : Հոս սորուելիքն ըր թող հոն սորուի ու սորուեցունէ : աս հողին տեղը ան հողը թող փորէ : Հոս թշուառ ըլլալուն հոն թըշուառ թող ըլլայ : Հոս շուտ և անկրօն մեռնելուն, հոն ուշ և հաւատքով թող մեռնի : »

Պատ. բարակեանի գրքոյն անաչառ է, Ամերիկեան բարքն և քաղաքակրթութիւնն չողոքորթուած չեն անդ : Հեղինակն անաչառութեան սիրող, է և ուստի մեքալ իւր գրքին լաւ կողմերն ցուցնելէ յետոյ յոռի կողմերն եւս պիտի նշանակեմք անաչառօրէն :

ԽԱԽԱՐ

« Լոյս և Խաւար » ի մեծագոյն թերութիւնն է, ըստ մեզ, այն զի « Խաւար » ին նկարագրութեան աւելի էջեր նուիրեալ են քան « Լուսոյն : » Չեմք ուզեր ըսել թէ այս երկրին յոռութիւններն լուել և միայն լաւութիւններն հուշակել պարտ էր, այլ կը խորհիմք թէ լաւ բաներուն աւելի ուշադրութիւն և քննութիւն նուիրել պատշաճ և օգտակար պիտի լինէր : Մինչդեռ ի Տաճկաստան՝ Հեղինակն չափազանց գովեստներ լսած է Ամերիկացիներէ նկատմամբ Ամերիկայի, և երկրաւոր դրախտի նման բան մի ներկայացուած է նմա նոր Աշխարհն : և երբ անձնական գիտողութիւնն ցրած է իւր առաջին սքանչացում, չափազանցութեան միւս ծայրն մղուած է :

Օտար երկրի և բարուց վերայ ճշգրիտ գաղափար կազմել յոյժ դժուարին է, վասն որոյ օտարականք կարի զգուշաւոր լինիլ պարտին իրենց դատողութեանց մէջ : Մեք հինգ տարի է որ կը բնակիմք ի Նիւ Եորք, և սակայն տակալին հազիւ կը համարձակիմք կարծիք և գատողութիւն արտադրել, շատանալով յաճախ մեր տպաւորութիւնն և միտն հրապարակ հանելով : Մեզ կը թուի թէ Նիւ Եորք մէկ քաղաք մի չէ, այլ երկու-երեք քաղաքներէ, իրարմէ տարբեր թէ և իրարու յարակից քաղաքներէ կը բաղկանայ : Ամերիկայի Միացեալ Նահանգք ալ ոչ միայն քաղաքական կազմակերպութեամբ բազում տէրութիւններէ կը բաղկանան — Հայերէն Նահանգ բառն ճիշդ գաղափարն չբացատրեր յայտ, պէտք էր ըսել « Միացեալ Տէրութիւնք » — այլ և տարբեր երկիրներէ կը բաղկանան : Նիւ Եորքի մէջ դժողք մի կայ, և երկինք մ'ալ կայ : Ամերիկայի մէջ « Նիւ ինկլէնտ » կոչմամբ ճանչուած Նահանգներու խումբն կարի տարբեր երկրի մ'է հարաւային և արեւմտեան երկիրներէն՝ բարուք և քաղաքակրթութեան աստիճանաւ : Նիւ ինկլէնտի փոքր քաղաքաց և գիւղերուն մէջ կրօնական զգացմունք, ընտանեկան սրբութիւն, առեւտրական պարկեշտութիւն, պանծալի վիճակի մէջ են, ընդհանրապէս խօսելով : Իսկ մեծ

քաղաքներուն մէջ բնական է որ քիչ կամ չատ ապակա-
նութիւն լինի: Մեք բոլորովին կը մերժեմք Պատ. Բա-
րակեանի այն դատողութիւնքն թէ «դպրոցներն անհա-
մար են բայց ուսանողք սակաւ», թէ «բաղդատմամբ գէ-
շին ունեցած աղէկն շատ քիչ է»: թէ «Ամերիկայի եւսն
քիչ մեծարտութեան եւ անգթութեան տիպար մը է»: թէ
«եթէ հոս մէկ առողջ օրիորդ կամ տիկին կայ, անոր
առջեւ հարկը վատաւողջներ կան: Եթէ մէկ գեղեցիկ
մը կայ, յիսուն տղեղներ կան: Խիստ շատերը կը նմա-
նին ճիւղներու»: Այս վճիռներն հերքելու համար կըր-
նայինք թուանշաններ, անձնական ուշադիր դիտողու-
թեան արդիւնք եղող համոզումներ եւ փորձառութենէ
գէպքեր պատմել աստ, բայց զայդ ընել պիտի լինէր գը-
րել գրքոյի մի քան դՊատ. Բարակեանին մեծագոյն, ինչ
որ չենք կարող գնել այժմիկ «Հայք»-ի անձուկ էջերուն մէջ:
այլ մտադիր եմք մասն առ մասն հրատարակել Ամերիկ-
եան բարուց վերայ մեր ուսումնասիրութիւններ, շարք
մի յօդուածոց ձեւին տակ, ուր ընթերցողք պիտի գտնեն,
կարծեմք, ի միջի այլոց, այնպիսի գաղափարներ որք
«Խաւար»ին մէկ կարեւոր մասն պիտի փարատեն:

ԻՐԵՆՔ ԶԻՐԵՆՔ ԴԱՐՄԱՆՈՂՆԵՐ

Ամերիկայի մէջ առաւել քան այլ երկրաց մէջ կը
յօրինուին եւ ժողովրդեան կ'ընծայուին պատրաստ դեղեր,
գեղազատեր, հեղուկներ, սնուցիչ նիւթեր: Այս պատ-
րաստ դեղեր մեծ փնտս կը գործեն հասարակութեան, եւ
առ հասարակ մերժելի են: Կ'ընդունիմք բացառութիւն
ներն, եւ սակայն նոյն իսկ այն բացառիկ լաւ դեղերն ալ
յաճախ կը գործածուին չարաչար:

Ձկան իւղն թոքախտաւորաց եւ տկարաց օգտակար
է, եւ հազարաւորք այնմ կը պարտին իրենց ապաքինու-
մըն ինչ ինչ տկարութիւններէ: Բայց որովհետեւ ձկան
իւղն ունից գարշելի եւ շատից անսիրտ համ ունի, դե-
ղագործք եւ բժիշկք շարունակ նոր նոր բաղադրութիւն-
ներ կը յօրինեն անոր համն արտօթելի ընելու համար:
Ձկան իւղի տարբեր խառնուրդներու բաղում բաղադր-
ութիւններ ներկայացուած են մեզ յօրինիչներու կողմա-
նէ իրեւա արտօթելի, եւ մեք ճաշակելով գտած եմք զայ
նըս, առանց բացառութեան անսիրտ կամ զգուշելի:
Այս բաղադրութիւնք համեղութեան կողմանէ ոչ ինչ
չահած լինելէ զատ բաղում ինչ կորուսած են աղդու-
ութեան կողմանէ. վասն զի երբ չի մի այս տեսակէն
խմէ ոք, հազիւ կէս չի ձկան իւղ խմած կը լինի:

Ըստ մեզ ձկան իւղ խմել ուղղունքն լաւ կ'ընեն
միշտ առնելով պարզ, մաքուր, անխառն կան իւղն: Փո-
քըր չափերով եթէ սկսին, կամաց կամաց կը վարժուին
եւ կը սիրեն անգամ պարզ իւղն:

Չարաչար գործածուող պատրաստ դեղերու մէջ նշա-
նաւոր տեղ կը բռնեն «մաքրողական» կոչուած դեղերն:
Բիւրաւոր մարդիկ այս ինչ կամ այն նիչ գեղէն չի մի
եւ աւելի կը խմեն որպէս զի արիւնն մաքրուի, եւ սակայն
քնաւ չգիտեն թէ իրենց արիւնն արդարեւ մաքրուելու
պէտք ունի, եւ եթէ ունի, ինչ տեսակ անմաքրութիւն է
եւ ինչ գեղով պէտք է որ մաքրուի: Իրեն բարեկամն որ
խմած է անկէ, կը կարծէ թէ արիւնն մաքրուած է, ուս
տի ինքն ալ կը սկսի խմել:

Ժողովուրդն պարտի լաւ սովորի սա բժշկական ճիշ-
մարտութիւն թէ «արեան անմաքրութիւն» ըսել որոշ

նշանակութիւն ունեցող խօսք մ'ըսել չէ, այլ թէ արիւ-
նըն կրնայ անմաքուր լինիլ տարբեր տարբեր անմաքրու-
թեամբ, եւ ամէն տեսակ անմաքրութիւն կը պահանջէ
իրեն յատուկ դեղն: Ով որ յիշուի կամ յանդիմանի կը
կարծէ թէ իր արիւնն անմաքուր է, եւ այս ինչ գեղէն
կ'առնու կը սկսի խմել, հարկը անգամին իննսուն եւ ինն
անգամն կը սխալի եւ փնտս կ'ընէ թէ իւր քոսկին թէ
իւր արիւնին:

Լուծողական դեղերն ալ հանրային առողջութեան
մեծ փնտս կ'ընեն: Ոմանք սովորութիւն ըրած են երբեմն
երբեմն այս ինչ գեղազատն կամ այն ինչ հեղուկն յղել
ստամոքսն եւ ներսի դին մաքրել: Այսպիսիք սովորաբար
փորի պնդութիւն ունեցողներն են. որք փոխանակ բժշ-
կի խորհրդով կանոնաւորելու իրենց աղեսաց գործողու-
թիւնն, իրենք իրենց ներսի դին «կը քակեն» երբեմն:
Բան մի որ զիրենք աւելի տրամադիր կ'ընէ սովորական
փորչորութեան: Անցեալ շարժու մեր ամերիկացի հիւ-
անդներէն մին, յոյժ ուսեալ երկտասարդ, պատմեց մեզ
թէ ինքն երկու երեք շարաթ շարունակ փորլուծական
այս ինչ գեղէն խմեց օր ըստ օրէ, որպէս զի արիւնն
մաքրուի. հետեւանքն այն եղաւ որ նիհարանալով տկա-
րացաւ եւ խորհելու անկարող վիճակի մի հասաւ: Ու-
սումնական մարդիկ անգամ եթէ չեն մտածեր թէ այսպի-
սի եղանակաւ փորէն դուրս քշուող հեղուկին մէջ շատ օգ-
տակար եւ լաւ տարրեր կան որք արիւնէն կ'ընեն, այնպէս
որ արիւնն փոխանակ մաքրուելու կ'աղքատանայ եւ ամ-
բողջ դրութիւնն կը տկարանայ, հապա անուս հասարա-
կութիւնն ի՞նչ ոճովներ չկրնար գործել: Այս եղաւ ա-
ռիթ մեր ներկայ յօդուածին, զոր կը վերջացունեմք
խրատելով մեր ընթերցողներն որ դեղերէ զգուշանան
որքան կարելի է, եւ երբ պէտք զգան դարմանի, գիմեն
այնպիսի բժշկի որ քան զիրենք աւելի բժշկութիւն գիտ-
նայ:

ՆԱՄԱԿ ԹԵՔՍՍՍԷՆ

Կալվընթըն, Թեքսաս 12 Մայիս 1891

Տր. Մ. Ս. Գաբրիէլեան, Տնօրէն «Հայք»-ի:

Տիար Վ. Տօնիկեանէն տեղեկացած լինելով թէ մեր
Հայերէն ուսանք Ուսթըրի գործարաններու մէջ կը բա-
նին, որոնց գործն իրենց երկրին մէջ հողագործութիւն,
չերամաքուծութիւն եւ գուարաբուծութիւն է եղեր. կը
բաղձամ անոնցմէ զոմանս ընտանեօք հանդերձ, եթէ ու-
նին, հոս բերել եւ Բլիթ Գրիքի ագարակին մէջ աշխատ-
ցունել, որուն ես պիտի տիրանամ շուտով: Այս ագա-
րակը ինթըրնէշնէլ եւ կրէյթ նորթհըրն կոչուած երկա-
թուղւոյն կայարանէն մէկ ու կէս մղոն է դէպ Արեւ-
մուտք:

Հողն սեւ է եւ քիչ մը աւաղուտ, հետեւապէս վեր-
ջին աստիճան հարուստ է բանջարեղէնի, մայիսի, վար-
սակի (օթմիլ), շաքար-եղէգի, ելակի (սթրօպէրի), պլու-
զատու ծառոց եւն մշակութեան համար:

Այս ագարակի մօտ կը գտնուի «Կալվէնթըն Գա-
ունթի» փութ ֆարմ» ըսուած ագարակն, ուր ամէն տե-
սակ բանջար, եղեգնաշաքար, բամպակ եւ պաղատու ծա-
ռեր կը մշակուին (մեծ մասամբ տանձենի):

Ձեր թերթն «Հայք» գործին լինելով Ամերիկա հաս-
տատուած Հայոց, դուք մեր Հայրենակցաց վիճակն ամե-
նէն աղէկ կը ճանչնաք, եւ ձեր օգնութիւնն անհուն օգ-
տակարութիւն պիտի ունենայ անոնց բարօրութեան հա-

մար, վասն զի Թէքսասը այժմ հողագործի երկիր կը դառնայ և շատերն հոն յաջողութիւն կը գտնեն. օրինակի համար առ Գերմանացիներն, որ բաւական տարածութեամբ են այս կողմն և կամաց կամաց ագարակի տէր կը լինին: Մեր Հայերն ինչու նոյն բանն չընեն:

Clear Creek ագարակն կալվածքնէն 22 մղոն է դէպ հիւսիսային արեւմուտք, ուր սենեակներով տուն մ'ալ ունի գետին վրայ և փոքր անտառով մը շրջապատուած է: Կլիմայն առողջ է, ամառուան տաքութիւնն Փարէնհայթով 90 աստիճանն չանցնիր, իսկ ձմեռն շատ մեղմ է:

Մեր հայրենակիցներուն կը թողում որոշել թէ թոշակա՞ն կուզեն աշխատիլ կամ արդիւնքն բաժնեկու կամ թէ հողի տէր դառնալու պայմանաւ:

Կ'ալաչեմ սր շուտով իմացունէք ինձ թէ Ուսթըր կամ ուրիշ տեղ գտնուող Հայերուն մէջ կա՞ն հասալ հաստատուիլ ուզողներ, եթէ ոչ ես պիտի գտնեմ պէտք եղած մարդիկն ուրիշ ազգէ:

Ընդունեցէք, Մեծ. Տնօրէն,
իմ խորին յարգանայ հաւաստին
Վ. Կիւրճի

Վերի նամակն հրատարակելէ յետոյ խմբագրութեան կը մնայ ըսել թէ մեր հայրենակիցներէն անոնք որք հողագործութիւն ընել և հողատէր լինիլ կը բաղձան, լաւ կ'ընեն որ մեր թղթակից Տիար Կիւրճիին դէրեն և բաղձալի տեղեկութիւններն առնէ յետոյ՝ որոշման և կարգադրութեան մը գտն նմա հաս ուղղակի: Պէտք է գրեն հետեւեալ հասցէին—

Mr. V. Gurdji, Galveston, Texas

ԱՅՑ Ի ԹՐՈՅ

«ՀԱՅԲ»ի Տնօրէնն հրաւիրեալ գնաց Թրոյարնակ Հայոց քով անցունել Մայիս 17ի կիրակի ցերեկն: Հայոց թիւն իբր իննսուն է այդ քաղաքի մէջ և գրեթէ ամէն ալ ներկայ էին սովորական գումարմանն, ուր խօսեցաւ նա ամերիկայեան համազգեստ մասնաւոր պատասխանատուութեան վերայ իբրեւ ներկայացուցչաց ամբողջ Հայ ազգին առաջի Ամերիկացւոյ, և ազգային խնդրոյն ներկայ պահանջման վերայ:

Ուրախութեամբ կը շնորհաւորեմք Թրոյի մեր Գաղթականութիւնն իւր սիրալոյսը և խաղաղ միաբանութեան համար, և մեր շնորհակալութիւնն կը յայտնեմք հրապարակաւ այն ջերմ և համակիր ընդունելութեան համար զոր ըրին «Հայք»ի և նորա Տնօրինին:

Եթէ էջք ներեն, յառաջիկայ թուով կը հրատարակեմք առ արթուն համազգիս Թրոյի ուղղեալ մեր բանից այն մասն որ ընդհանուր կարեւորութիւն ունի:

ՄԵԼԱԳՈՅԺՐ

Տիար Յովհաննէս Փափազեան կնքեց իւր մահկանացուն անցեալ կիրակի օր Հարթֆըրտի հիւանդանոցին մէջ՝ յետ տասնօրեայ տառապանայ ի հիւանդութենէ ինչ աղեաց: Տիար Յովհաննէս շնորհալի և տաղանդաւոր երիտասարդ մ'էր բառերուն ճշմարիտ իմաստուն, և իւր ուսումնական ընթացք Այնթապի Գօլէճին մէջ աւարտած լինելէ յետոյ եկած էր յԱմերիկա և Հարթֆըրտի ձեռնարանին մէջ Աստուածաբանութիւն կուսանէր: Իւր ազ-

նիւ բնաւորութեան և մտաւորական կարողութեանց շնորհիւ բոլոր ուսուցչաց բարձր համարումն դրաւած էր: Աւագ որ մահն յափշտակեց այս յուսալից երիտասարդ: Իւր վշտահար եղբօր, Պատ. Մանասէ Փափազեանի, որ Ռօլի մէջ Ամերիկեան եկեղեցւոյ մի սիրեցեալ երէցն է, կը մաղթեմք մխիթարութիւն յերկնից:

— Տիգրանակերտցի երիտասարդ մի, որոյ մատն մաքենայի ներքեւ մնալով կարուած էր քանի մ' ամիս առաջ և ժամանակ մի անգործ և անգրամ մնալով յուսահատութեան մատնուած էր, անցեալներ ջուրն նետուելով անձնապան եղած է:

— Ի Հարթֆըրտ հաստատեալ Տիար և Տիկին Տօնչեան իրենց անգրանիկ մանկիկն անցեալ շաբթու ի հող գնելու դժբաղդութիւնն ունեցեր են, որպէս կը տեղեկանամք Հարթֆըրտի Լրագիրներէն:

ԵՐԿՐԾՐ ՏԻԿԻՆ ՊԻՇԸՓԻ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Անդլիայի գիտական Տիկին Պիշըփ, Հայաստանի ուղեւորութենէն վերադարձած, յօդուած մի կը հրատարակէ Contemporary Review Մայիսի թուոյն մէջ, յորում կը պատմէ իւր իսկ արկածներն, և կը նկարագրէ Հայոց և Ասորոց հարստահարեալ վիճակն ի ձեռն Բերդաց: Այդ երկար յօդուածէն կը հանեմք հետեւեալ կըտորներն:

«Չորս միլիոնէ բաղկացեալ ազգ մի, փառաց և ազնոյից մասին անվագական պատմութեամբ, աշխարհի քան զամենայն սրամիտ, խնայասէր, վաճառական, դրամ շահող ժողովրդոց մին, յաճախ ինքն հարուստ անդ ուր այլք աղքատ են, ինքն գեղափոխութեամբ անդ ուր այլք կը փտին, աշխուրժ ի պատեհութիւնս, խանդավառեալ ազգային և տեղական բուռն ոգւով միտք կ'արտայայտէ ինքզինք ազգային անկախութեան պահանջմամբ, ցեղային գրգռիչ իմն հպարտութեամբ, Հնդկաստանի, Պարսկաստանի, Թուրքիոյ և Եւրոպայի մէջ հարուստ գաղթականութեամբ, իւրուրոյն եկեղեցեալ և աստիճանօք, քաղաքակրթութեամբ և թերթերով, կրթական ընտիր-հաստատութեամբ, և Կ. Պօլսոյ մէկ հինգերորդն լինելով ուր մեծամիառ Պատրիարք մի պաշտօնապէս կը ներկայացունէ զիրենք թրքական կառավարութեան, Հայերն չեն կրնար անգիտացուիլ:

«Հարստահարութեան տեսակ մ'ալ քրիստոնէից հոգերուն բռնի և յանիրաւի յափշտակուիլն է: Տարէսի մէջ, օրինակի համար, Թամարազա Պէկն փորձեց ստիպել ժողովուրդն իրեն յանձնել իրենց գոջաններն և հողերն, բայց մերժեցին: Խոտի և ցորենի հունձքն լինալէն յետոյ, Պէկն իր ծառաներն յղեց և ալքել տուաւ ամէնէն: Տիգրի կառավարութեան բողոքեցին գիւղացիք և բարի Մահմադականի մի ազգեցութեան շնորհիւ ձերբակալուեցաւ Պէկն, բայց անպատիժ արձակուեցաւ նորէն: Այժմ Թամարազա Տարէսի քան զամենայն յուսթի հողերն կը գրաւէ և իբրեւ իրենն կը մշակէ, և գոջաններն ալ սպառնալեօք կը պահանջէ:

ԿԵՐՆԻՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ՀԱՅՔ»-ի առաջին վեցամսեայ շրջանըն լրանալու վերայ լինելով՝ կը խնդրեմք մեր վեցամսեայ բաժանորդներէն փութով վճարել տարւոյն մնացեալ կէսին համար:

ԸՄՆԵՐԻԿԵՑԻՈՑ ԵՐԿԻՒՂՆ Ի ԳԵՂԹԵԿԵՆՈՒԹԵԼՆՑ

Ամերիկացիք իրաւացի անհանգստութեամբ կը դիտեն գաղթականութեան աղտոտ հեղեղն որ Հին Աշխարհէն կը վազէ իրենց վերայ: Զգուշաւոր քննութիւնք երեւան կը բերեն թէ Եւրոպեան կառավարութիւնք յաճախ իբրեւ աքսորավայր կը դործածեն զՄիացեալ Նահանգս, ուր կը յղեն աւաղակներ և անուղղայ ոճրագործներ: Անցեալ օր այս կարգի նշանաւոր դէպք մի յայտնուեցաւ աստ: Գերմանական գիւղի մի քաղաքապետութիւնն յղած էր ի նիւ Եորք գաղթական մի որ ոչ արուեստ գիտէր, ոչ գրամ ունէր և, որ յոռեգոյնն է, խելագար և մարդասպան մ'էր: Մարդն յետս զրկուեցաւ, և հրահանգ ալ ուղղուեցաւ Ամերիկայի գեսպանին ի Պէռլին որ խիստ ներկայացում մ'ընէ Գերմանական կառավարութեան և բողոքէ Գերմանական այս անիրաւութեան դէմ:

Ուօշինկթընի կառավարութիւնն օրէնք ունի որ ապրուստի միջոց չունեցող ու իցէ գաղթական չընդունուի Միացեալ Նահանգաց հողոյն վերայ: Դժբաղդաբար և հակառակ օրինաց, և օրէնքն ի գործ դնելու փութաջանութեան հակառակ, հազարաւորներ մուտ կը գտնեն այս օրք օրէնքին կողմանէ նախատեսուած անյարմարութեանց երկու երեքն միանգամայն ունին: Ամերիկայի Ազգային Ժողովոյն հզօրագոյն մտքերն կը յոգնին ծրագրելու այնպիսի միջոցներ որով երկիրն ազգութեայ պաշտպանութիւն Եւրոպեան ժողովրդոց դիրքին դէմ, և սակայն ցարդ յաջողած չեն: Վիճաբանութեան նիւթ եղած միջոցներէն մին է պահանջել որ ամէն գաղթական Անգլի երէն գիտնայ, ուրիշ մի որ ամէն գաղթական այս ինչ չափ դրամ պահեստի դնէ կառավարութեան քով՝ յետոյ ընդունելու պայմանաւ: Բայց դեռ ընդունուած չեն այս թեւադրութիւնք:

Ամերիկայի ապագայն կրնայ վտանգուիլ անբարոյական անգգամ անճարակ և անարուեստ մարդոց չափազանց գաղթականութեամբն, ուստի և արդար է որ այս երկրին կառավարութիւնն խիստ միջոցներ ձեռք առնուայնպիսեաց մուտքն արգելելու համար:

Զմոռնանք յիշել թէ ոչ սակաւ Հայեր ևս մինչեւ նիւ Եորքի Նաւահանգիստն եկած հասած լինելէ յետոյ՝ Նոր Բանանի հողին վերայ ոտք կոխելու չարժանանալով յետս զրկուած են ժամանակ ժամանակ:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

— Կալկաթայի մէջ Հնախաւոր սաստիկացած է: Նոյնպէս Հապէշխտանի մէջ երեւան ելած է այդ ախտ: Թէսաղոնիկէի Կ. Պօլսոյ և Թուրքիոյ ուրիշ մի քանի քաղաքացի մէջ անցեալ տարուան նման կռիւի երեւան ելած է:

— Տր. Բրուսա, առողջապահական վերասեսուչն, փարիզի Բժշկական Աքադեմիին տեղեկագրութիւն մի մատոյց, յորում, ի մէջ այլոց, կը հայտարարէ թէ Միւսուլիմանաց ուխտագնացութիւնն ի Մէքքէ՝ Եւրոպայի առողջութեան համար հաստատուն վտանգ կամ սպառնալիք մ'է: Յայտ է թէ յաճախ Հնախաւոր տարածման միջոց եղած է այդ ուխտագնացութիւն:

— Daily News-ի մէջ կը կարդամք թէ Անգ. Բառլամէն թի անդամներէ և յայնոց Յանձնախումբ մի կազմուած է տեղեկութիւն հաւաքելու Հայաստանի նկատմամբ և յիշեցնելու Իրան նորա դաշնագրական յանձնառութիւններն Հայաստանի մասին: Այս Յանձնախումբի մէկ հատուածն հոգ պիտի տանի Լօնտրա հրատարակող Հայ թերթին որպէս զի Իրան համար յուժանաս փրաւորիչ եղող ոչ ինչ պարունակէ:

— Ս. Բեդրսպուրկէն հեռագիր մի կ'ըսէ թէ Ժէնէնալ Զէրէմէթիէֆ ի Թիֆլիզ յղուած ատեն լիւրժի հրահանգ ստացաւ Հայոց հետ վարուելու մասին: Անցեալ աշուն Հայոց անիշխանական խմբի մի և նորա պատուիրակաց միջեւ տեղի ունեցող թշուառութիւններ բռնուեցան թշուառան մէջ, յորս ուժանակի և ուժմբի խօսքեր կը դռնուէին: ասոր վերայ ուս կառավարութիւնն սագնապեցաւ և խիստ միջոցներ ձեռք առաւ այս չարժման մասնաճիւղերն յերեւ հանելու: Անձինք ոմանք ձերբակալուեցան և Կարսի կողմն կազմուած զինեալ կամաւորներն, որոց նպասակն էր օգնութեան երթալ տաճկահայոց, ցրուեցան, ինչպէս նաեւ ի նպաստ այս չարժման եղող հանգանակութիւնք ալ խստիւ արգելուեցան:

Ն Ո Ր Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ն

Լոյս տեսաւ

Լոյս տեսաւ

Լ Ո Յ Ս Ե Ի Խ Ա Ի Ա Ր

Գրեց — Հ. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Բ Ա Ր Ա Կ Ե Ա Ն

136 երեսներէ բաղկացեալ գրքոյկ մ'է, որ կը խօսի Նոր Աշխարհի լուսոյն և խաւարին վերայ, լաւ և յոռի սովորութեանց և բարուց վերայ, և յաճախ կը բաղդատէ Ամերիկայի կացքն ու գնացքն արեւելից մէջ տեսնուածներուն: Գինն է 25 սէնթ, կեդրոնատեղին է Հեղինակի սուրն 162 West Street, Worcester, Mass.

ED. LEGOLL, PHARMACIST,

Successor to W. CASWELL,

Pharmacie Francaise,

286 SEVENTH AVE., BET 26 TH & 27 TH STS., N. Y.

ESTABLISHED 1846.

Դեղագրիք կը պատրաստուին խնամով

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE,

NEW YORK.

Դեղագրիք կը պատրաստուին խնամով

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE

NEW YORK CITY

16 և 17 ըզ փողոցներու միջև արեւելեան կողմն:

— Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն —

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն

Մ. Ս. Գ Ա Ր Ի Է Լ Ե Ա Ն